Ազգային ժողովը քննարկում է նախագահի՝ համաներում հայտարարելու առաջարկը

26.05.2011 08:42

http://tert.am/am/news/2011/05/25/amnesty-parliament/

Ազգային ժողովը այսօր մեկնարկած նիստում սկսեց քննարկել Հայաստանի անկախության 20-ամյակի առթիվ նախագահ Սերժ Սարգսյանի ներկայացրած համաներում հայտարարելու առաջարկը: Ներկայացնելով համաներման առաջարկի էությունը՝ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը նկատեց, որ այս համաներումը Հայաստանի նախագահի բարի կամքի դրսևորում է, հումանիստական քայլ: «Սակայն այս համաներումը պետք է ընկալել ոչ միայն բարի կամքի դրսևորում, այլև պատասխանատվության ընկալման մի նոր հավաստում: Սա բնավ չի նշանակում զգոնության թուլացում: Ավելին, ապագայի հանդեպ մեր ունեցած մտահոգությունները մեզ պարտադրում են լինել էլ ավելի անհանդուրժող օրինախախտումների հանդեպ»,- հայտարարեց արդարադատության նախարարը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })